



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. մայիսին /վերլուծություն/

2005թ. մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9490 գործարքներ, որոնց քանակը 2004թ. մայիսի համեմատ աճել է 23.8%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ նվազել 6.4%-ով:

2005թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3523 օտարման գործարքների 88.4%-ը կազմել են առուվաճառքները, 10.8%-ը՝ նվիրատվությունները և 0.8 %-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 41.8%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. մայիսին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2004թ. մայիսի համեմատ, աճել է 15.4%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ նվազել 7.5%-ով: 2005թ. մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 69.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 29.1%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ 2.7%-ով:

2005թ. մայիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2005թ. մայիսին համարժեք է 445.1դրամին/

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. մայիսին /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/	Միջին գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
		մայիս 2004թ.	մայիս 2005թ.	ապրիլ 2005թ.
Կենտրոն	350.0-970.0	450.5	605.1	590.0
Արաբկիր	250.0-650.0	351.7	515.0	500.5
Քանաքեռ-Զեյթուն	200.0-500.0	217.5	313.8	300.8
Նոր-Նորք	200.0-400.0	183.5	289.8	270.0
Ավան	180.0-350.0	174.6	269.5	256.0
Էրեբունի	160.0-400.0	175.8	253.5	240.5
Շենգավիթ	160.0-450.0	200.6	303.5	295.2
Դավթաշեն	200.0-450.0	220.4	312.7	301.0
Աջափնյակ	200.0-450.0	198.3	301.7	285.0
Մալաթիա-Սեբաստիա	200.0-400.0	199.2	293.7	280.5
Նուբարաշեն	90.0-180.0	75.8	140.0	125.0
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	90.0-970.0	222.5	327.1	313.1

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. մայիսին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 4.5%:

2005թ. մայիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 377 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. մայիսի համեմատ նվազել է 11.1%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ 6.2%-ով:

2005թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. մայիսին /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/	Միջին գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
			մայիս 2004թ.	մայիս 2005թ.	ապրիլ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	40.0-150.0	63.2	98.3	92.3
	Ապարան	20.0-60.0	32.0	45.0	42.0
	Թալին	20.0-65.0	30.5	45.0	39.0
Արարատ	Արտաշատ	40.0-95.0	55.8	76.8	73.5
	Մասիս	40.0-100.0	58.9	89.5	80.0
	Վեդի	30.0-65.0	39.8	45.5	45.0
	Արարատ	30.0-70.0	36.6	58.2	52.2
Արմավիր	Վաղարշապատ	50.0-180.0	86.5	153.5	150.5
	Արմավիր	40.0-110.0	50.0	89.5	81.5
	Մեծամոր	20.0-65.0	32.6	49.0	43.0
Գեղարքունիք	Սևան	20.0-75.0	32.9	51.0	45.8
	Գավառ	20.0-65.0	32.8	41.8	37.5
	Մարտունի	20.0-70.0	34.0	50.0	42.0
	Վարդենիս	10.0-45.0	17.3	24.5	24.0
	Ճամբարակ	13.0-45.0	17.9	20.3	20.0
Լոռի	Վանաձոր	30.0-95.0	62.3	80.0	74.0
	Ստեփանավան	20.0-65.0	34.3	46.7	46.0
	Սպիտակ	30.0-80.0	34.0	50.6	50.0
	Ալավերդի	15.0-50.0	25.8	35.7	27.1
	Տաշիր	15.0-60.0	23.0	42.0	37.0
	Թումանյան	9.0-20.0	9.0	11.2	11.0
	Շամլուղ	5.0-18.5	5.0	6.1	6.1
	Ախթալա	15.0-35.5	18.7	22.8	22.6
Կոտայք	Արովյան	45.0-180.0	89	149.0	135.0
	Նոր Հաճն	50.0-120.0	58.9	100.4	95.2
	Բյուրեղավան	30.0-100.0	37.5	72.0	65.0
	Եղվարդ	35.0-100.0	44.2	88.4	80.1
	Հրազդան	30.0-100.0	34.5	60.3	54.2
	Ծաղկաձոր	40.0-150.0	75.9	114.5	109.5
	Չարենցավան	30.0-85.0	35	64.3	60.3
Շիրակ	Գյումրի	40.0-120.0	72.2	86.8	79.6
	Արթիկ	20.0-60.0	28.5	44.5	44.2
	Մարայիկ	18.0-50.0	26.5	35.2	35.0
Սյունիք	Գորիս	25.0-100.0	34.8	76.5	69.0
	Կապան	20.0-80.0	33.1	58.0	58.0
	Սիսիան	20.0-80.0	32	52.3	52.3
	Մեղրի	18.0-80.0	25.3	43.0	40.0
	Ագարակ	18.0-80.0	25.2	36.1	30.1
	Քաջարան	13.0-40.0	18.9	27.5	27.0
	Դաստակերտ	10.0-25.0	12.0	14.1	14.0
Վայոց Ձոր	Վայք	30.0-80.0	35.3	52.0	46.0
	Եղեգնաձոր	40.0-100.0	47	78.5	73.2
	Ջերմուկ	40.0-120.0	41.1	84.0	82.5
Տավուշ	Դիլիջան	30.0-80.0	36.3	64.5	59.5
	Իջևան	40.0-100.0	43.5	73.0	72.2
	Բերդ	25.0-70.0	29.3	54.5	50.2
	Նոյեմբերյան	15.0-45.0	27.2	27.8	27.7

2005թ. մայիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 7.2%:

2005թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 360 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 78, մյուս մարզերում միասին վերցրած՝ 282: 2004թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 22.7%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 11.4 %-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 25.4%-ով: 2005թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 20.0%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 35.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 14.3%-ով:

2005թ. մայիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. մայիսին /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/	Միջին գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
		մայիս 2004թ.	մայիս 2005թ.	ապրիլ 2005թ.
Կենտրոն	255.0-2000.0	462.5	669.1	640.4
Արարկյի	200.0-1000.0	354.6	537.2	503.7
Քանաքեռ-Զեյթուն	150.0-600.0	219.4	320.9	304.3
Նորք-Մարաշ	200.0-1000.0	331.9	382.1	362.3
Ավան	190.0-800.0	176.8	276.2	258.8
Էրեբունի	150.0-500.0	177.0	260.4	243.7
Շենգավիթ	150.0-450.0	201.2	311.1	298.9
Դավթաշեն	200.0-900.0	221.6	324.9	307.5
Աջափնյակ	125.0-600.0	199.8	311.3	288.6
Մալաթիա-Սեբաստիա	140.0-900.0	200.7	304.3	284.4
Նուբարաշեն	80.0-200.0	76.2	148.8	128.6
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	80.0-2000.0	238.3	349.7	329.2

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. մայիսին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսական աճը կազմել է 6.2%:

2005թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2005թ. մայիսին /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/	Միջին գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
			մայիս 2004թ.	մայիս 2005թ.	ապրիլ 2005թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-180.0	83.4	103.8	98.9
	Ապարան	25.0-60.0	38.9	47.4	43.7
	Թալին	20.0-65.0	30.9	47.1	40.3

Արարատ	Արտաշատ	50.0-90.0	62.0	79.4	74.9
	Մասիս	50.0-100.0	63.0	91.8	81.6
	Վեդի	30.0-70.0	40.5	50.7	50.5
	Արարատ	30.0-80.0	37.6	60.6	54.1
Արմավիր	Վաղարշապատ	80.0-180.0	90.2	155.6	152.7
	Արմավիր	50.0-100.0	52.7	91.5	83.0
Գեղարքունիք	Սևան	20.0-65.0	36.4	53.0	48.8
	Գավառ	20.0-60.0	39.9	44.1	41.6
	Մարտունի	25.0-60.0	35.1	52.6	45.5
	Վարդենիս	15.0-50.0	21.3	27.7	27.6
	Ճամբարակ	15.0-50.0	20.1	24.3	24.3
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	69.7	83.5	75.7
	Ստեփանավան	35.0-80.0	35.1	58.6	58.3
	Սպիտակ	35.0-70.0	34.3	52.6	51.9
	Ալավերդի	15.0-50.0	26.0	37.8	30.0
	Տաշիր	15.0-55.0	23.3	45.0	38.4
	Թումանյան	10.0-30.0	10.1	14.1	14.0
	Շամլուղ	5.0-20.0	6.2	8.9	8.9
	Ախթալա	20.0-40.0	19.9	24.3	24.3
Կոտայք	Արուվյան	70.0-180.0	93.0	151.4	136.3
	Նոր Հաճն	40.0-120.0	59.3	102.6	98.2
	Բյուրեղավան	35.0-90.0	38.2	74.4	66.5
	Եղվարդ	50.0-100.0	47.6	90.4	82.1
	Հրազդան	35.0-80.0	40.5	63.0	58.6
	Ծաղկաձոր	70.0-150.0	85.8	122.2	115.4
	Չարենցավան	35.0-90.0	35.8	67.5	63.4
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	91.6	95.7	92.4
	Արթիկ	20.0-70.0	28.7	46.6	46.3
	Մարալիկ	25.0-50.0	26.9	37.2	36.4
Սյունիք	Գորիս	40.0-90.0	35.7	79.1	70.2
	Կապան	30.0-80.0	34.7	60.4	59.9
	Սիսիան	20.0-70.0	32.4	54.4	47.8
	Մեղրի	25.0-60.0	28.2	45.2	41.4
	Ագարակ	15.0-50.0	27.4	38.2	31.6
	Դաստակերտ	10.0-35.0	13.1	16.7	16.6
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	37.0	54.0	48.1
	Եղեգնաձոր	40.0-100.0	49.3	80.6	75.0
	Ջերմուկ	25.0-90.0	43.4	61.6	60.4
Տավուշ	Դիլիջան	30.0-90.0	39.2	73.0	68.6
	Իջևան	40.0-90.0	43.9	75.5	73.6
	Բերդ	20.0-85.0	30.9	56.2	51.4
	Նոյեմբերյան	20.0-60.0	30.8	31.1	31.1

2005թ. մայիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճը կազմել է 7.2%:

Ընդհանուր առմամբ, 2005թ. մայիսին հանրապետությունում օտարվել են 1034.46 հա /այդ թվում՝ 91.13 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 900.91 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 967.86 հա հողերի /այդ թվում՝ 89.16 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 841.76 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 65.20 հա /այդ թվում՝ 1.32 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 59.15 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 619.55 հա, որից 613.79 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2005թ. մայիսին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

ԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	8	0.94	15	76.89	0	0.00	91	8.19	20	3.13
Արագածոտն	3	12.68	0	0.00	0	0.00	74	21.07	45	4.75	0	0.00
Արարատ	26	45.43	14	1.40	20	0.28	100	39.89	68	6.05	1	0.06
Արմավիր	50	388.69	0	0.00	1	0.02	100	225.11	55	4.86	4	0.75
Գեղարքունիք	0	0.00	2	1.12	0	0.00	10	4.51	7	1.25	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	33	19.68	7	0.74	1	0.002
Կոտայք	1	1.13	21	1.67	0	0.00	107	38.92	120	11.34	2	0.53
Շիրակ	0	0.00	2	0.04	1	0.07	13	8.94	7	0.60	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	9	6.78	2	0.09	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	3	0.02	10	27.48	2	0.38	0	0.00
Տավուշ	0	0.00	1	0.04	0	0.00	3	1.45	3	0.45	0	0.00
Ընդամենը	80	447.93	48	5.21	40	77.28	459	393.83	407	38.70	28	4.47

2005թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են 1067 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ մայիսին՝ 786/ այդ թվում 539-ը՝ գյուղատնտեսական նշանակության /376/, 523-ը՝ բնակավայրերի /403/, 4-ը՝ արդյունաբերական օբյեկտների /5/ և 1-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողերի նկատմամբ /2/:

2005թ. մայիսին հողերի առուվաճառքներից 158 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ մայիսին՝ 187/, այդ թվում 11-ը՝ /34.00 հա/ Երևանում /10/, իսկ 147-ը՝ /452.82 հա/ մյուս մարզերում /177/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 80 միավորը /447.93 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2004թ մայիսին՝ 58/, 45-ը՝ /4.94 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /119/, 30-ը՝ /33.64 հա/ հասարակական կառուցապատման /8/ և 3-ը /0.31 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր:

2005թ. մայիսին հանրապետությունում արձանագրված 539 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 80-ն իրականացվել են աճուրդների և 12-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների	Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների
---------------------------------------	--	--

	Միավորների քանակը	Մավերեւը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/			Միավորների քանակը	Մավերեւը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	12.68	165.0	815.0	385.0	65	16.19	800.0	10000.0	3980.0
Ապարան								200.0	1700.0	630.0
Թալին						8	4.33	200.0	1680.0	520.0
Ծաղկահովիտ						1	0.55	170.0	2100.0	280.0
Արարատի մարզ										
Արտաշատ	1	0.30	3440.0	3440.0	3440.0	50	20.75	740.0	12000.0	2360.0
Մասիս	15	6.33	145.0	11235.0	1550.0	34	10.14	400.0	8800.0	2610.0
Վեդի	10	38.80	675.0	3485.0	2600.0	16	9.00	450.0	7200.0	1580.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						42	68.40	650.0	4650.0	1470.0
Բաղրամյան	21	341.87	90.0	1085.0	190.0	16	135.17	200.0	1500.0	810.0
Վաղարշապատ	29	46.82	50.0	1430.0	380.0	42	21.53	980.0	14000.0	2440.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	250.0
Մարտունի						7	1.06	100.0	4000.0	910.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						3	3.45	60.0	1180.0	335.0
Լոռու մարզ										
Ալավերդի						2	0.73	360.0	5500.0	780.0
Գուգարք						13	4.60	500.0	6000.0	1850.0
Սպիտակ						1	0.10	500.0	3300.0	1040.0
Ստեփանավան						1	0.49	180.0	4000.0	540.0
Տաշիր						6	3.63	100.0	400.0	350.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	1.13	1000.0	1000.0	1000.0	55	10.91	600.0	20000.0	5760.0
Եղվարդ						33	20.01	380.0	10000.0	3920.0
Հրազդան						17	7.16	250.0	6000.0	1250.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						11	8.71	550.0	2500.0	750.0
Ամասիա								80.0	525.0	200.0
Անի								240.0	800.0	380.0
Աշոցք								60.0	210.0	190.0
Արթիկ						2	0.23	140.0	800.0	300.0
Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	590.0
Կապան								120.0	2000.0	430.0
Մեղրի						2	0.25	400.0	4240.0	900.0
Սիսիան						7	6.53	90.0	1500.0	370.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						3	8.26	260.0	4000.0	2540.0
Վայք						7	19.22	120.0	3400.0	1000.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	0.12	100.0	2000.0	680.0
Իջևան								530.0	4000.0	1600.0
Նոյեմբերյան						2	1.33	100.0	8340.0	790.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. մայիսին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են 356 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքի գործարքներ, որից 40-ը՝ աճուրդային վաճառքներ և 4-ը՝ դատարանի վճռով գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աջտարակ						40	41115.0	250.0	8000.0	3980.0
Ապարան						1	950.0	250.0	1400.0	340.0
Թալին						4	5470.0	100.0	800.0	150.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	8	8208.0	90.0	1145.0	650.0	8	8550.0	300.0	6000.0	1490.0
Մասիս	6	5780.0	568.0	575.0	570.0	50	41970.0	300.0	20000.0	1760.0
Վեդի						10	9990.0	250.0	2200.0	1050.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						9	13128.0	300.0	5000.0	1580.0
Բաղրամյան						1	600.0	180.0	600.0	230.0
Վաղարշապատ						45	34865.0	300.0	10000.0	2370.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	3870.0	300.0	2000.0	660.0
Ճամբարակ	1	10000.0	230.0	230.0	230.0			100.0	300.0	160.0
Մարտունի						3	2890.0	200.0	600.0	310.0
Սևան	1	1200.0	255.0	255.0	255.0	1	5690.0	200.0	2000.0	260.0
Վարդենիս								100.0	300.0	125.0
Լոռու մարզ										
Ալավերդի						1	1500.0	150.0	600.0	210.0
Գուգարք						4	2360.0	150.0	5200.0	920.0
Սպիտակ						2	3490.0	140.0	900.0	210.0
Ստեփանավան								100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	17	13500.0	270.0	3150.0	2955.0	51	45508.0	300.0	10000.0	2850.0
Եղվարդ						55	55515.0	300.0	10000.0	3120.0
Հրազդան	4	3199.0	10675.0	10675.0	10675.0	11	9179.0	300.0	8000.0	1980.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	3014.9	250.0	3400.0	540.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի						1	20.0	150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0
Արթիկ	2	350.0	600.0	2000.0	1300.0	2	2980.0	150.0	900.0	250.0
Սյունիքի մարզ										
Գորիս						2	920.0	150.0	1200.0	430.0
Կապան								150.0	1400.0	410.0

Մեղրի								150.0	900.0	230.0
Միսիան								150.0	900.0	260.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	1500.0	150.0	2200.0	420.0
Վայք								170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան	1	400.0	585.0	585.0	585.0	3	4463.0	150.0	2200.0	670.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2005թ. մայիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 5 գործարքներ 2.09 հա մակերեսով, ընդ որում 4-ը՝ Արարատի /1.97 հա/ և 1-ը՝ Արմավիրի /0.12 հա/ մարզերում:

2005թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1187 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.5%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 21.7%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. մայիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 65.1%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ 17.4%-ով:

2005թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 46 բնակարանների, 21 անհատական բնակելի տների, 249 հասարակական, 32 արտադրական նշանակության օբյեկտների, 837 միավոր հողերի և 2 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2005թ. մայիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 15 վարձակալության գործարքների քանակը 2004թ. մայիսի համեմատ նվազել է 66.7%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ 54.5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. մայիսին հանրապետությունում վարձակալվել են 9707.40 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 39.44 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 9220.00 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 409.70 հա բնակավայրերի, 7.64 հա արդյունաբերական օբյեկտների, 9.62 հա հատուկ պահպանվող տարածքների, 9.50 հա ընդերքի օգտագործման համար նախատեսված, 10.90 հա էներգետիկայի օբյեկտների և 0.60 հա տրանսպորտի օբյեկտների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ մակերեսներ են արձանագրվել Կոտայքի մարզում՝ 5804.73 հա, որից 5803.33 հա գյուղատնտեսական նշանակության:

2005թ. մայիսին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 7687.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. մայիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	3	160.00	75	131.75
Արարատ	13	1456.00	28	569.50
Արմավիր	0	0.00	7	20.69
Գեղարքունիք	8	80.00	36	94.82
Լոռի	0	0.00	56	121.21

Կոտայք	56	5457.00	52	346.33
Շիրակ	4	534.00	102	135.02
Սյունիք	0	0.00	49	74.61
Վայոց Ձոր	0	0.00	27	35.87
Տավուշ	0	0.00	2	3.20
Ընդամենը	84	7687.00	434	1533.00

2005թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 843 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.9%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. մայիսի համեմատ աճել է 35.7%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ նվազել 11.2% ու: Ընդ որում գրավադրման գործարքների 42.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /20.6%/, առանձնատների /16.1%/ և հողերի /15.1%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 416 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. մայիսի համեմատ աճել է 34.2%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ 3.5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. մայիսին հանրապետությունում գրավադրվել են 140.42 հա /այդ թվում 12.48 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 126.67 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ մակերեսներ են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 48.83 հա, որից 48.68 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2005թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 11 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.2%: 2004թ. մայիսի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 52.8%-ով, իսկ 2005թ.ապրիլի համեմատ՝ 29.2%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Սյունիքի մարզում՝ 29.4%:

2005թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1643 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. մայիսի համեմատ աճել է 53.0%-ով, իսկ 2005թ. ապրիլի համեմատ՝ նվազել 6.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /51.2%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն